

նելու և նրանց գործադրուելը կամ չգործադրուելը ստուգելու: Այդ վիճակը պարզ է որ չէ կարող յարատեելի: Արսուիւտիդմը՝ զինուորական, պատերազմական տեսակէտից իր նշանաւոր պատմական դերը կատարելուց, հասարակական զործակցութեանը (Coopération) մեծ զարկ տալուց յետոյ՝ ներքին յարակայ ուժերի մղումով, ժամանակի ընթացքում տեղի է տալիս նոր, սահմանադրական կարգերի առաջ եւ սիւսնեծանի քմահաճ կամքը փոխարինում է ժողովրդական զերիշխանութեան մեծ սկզբունքով:

Միք. Յովհաննիսեան

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԵՒ ՖԵԴԵՐԱՑԻԱՑԻ ԽՆԴԻՐԸ

### I

Ռուսական կուռ արսուիւտիդմի հետզհետէ ջախջախուող փլատակների վրայ շտապում են բազմապիսի տարրեր պարզել իրենց կուսակցական դրօշակները: Աւսուկրատիայի միապաղաղ մթնոլորտը, որ աշխատում էր ամբողջ աղգաբնակութեան կաշկանդել քաղաքական ինդիֆերենտիզմի (անտարբերութեան) նեղ շրջանակի մէջ, չքանում է այսօր զգալի արագութեամբ և տեղի տալիս դասակարգերի և կուսակցութիւնների քաղաքական ազատ մրցութեան:

Իւրաքանչիւր կուսակցութիւն ընկան անհրաժեշտութեամբ ունի իր քաղաքական որոշ ծրագիրը, և իրաւ, ոչ միայն սօցիալ-քաղաքական ծանրակշիռ բէֆորմների և տնտեսական բարենորոգումների նկատմամբ, այլև ապագայ Ռուսաստանի—որի սկիզբը ներկայից է սկսւում—քաղաքական կազմի վերաբերմամբ:

Այդ տեսակէտից միմիանց դիմադրող ու հակասող դաւանանքները, որոնք այսօր քաղաքական հօրիզոնի վրայ հրատապ խնդիրների բնաւորութիւն են ստացել, կազմում են քաղաքա-

կան կենտրոնացումը եւ ֆեդերացիան: Յատկապէս ձախակողմեան թեքերն են—օտջիալ-դեմոկրատական և դեմոկրատ-յեղափոխական կուսակցութիւնները—որոնց համար քաղաքական այդ հակադրական credo-նքը այժմէութեան նշանակութիւնն են ստացել:

Մեր մամուլը ևս զբաղուեց այդ խնդրով: «Մշակի» մէջ պ. Պատակը «Կենտրոնացում և ֆեդերացիա»<sup>1)</sup> վերնագրով մի երկար յօդուածի մէջ աշխատում է, իբրև ֆեդերալիստ, ցոյց տալ քաղաքական կենտրոնացման փաստակարութիւնը և ֆեդերատիւ կազմի օգտակարութիւնն ու անհրաժեշտութիւնը: Պ. Պատակը, իբրև Հ. Յ. Դաշնակցութեան ուղղութեան կողմնակից, պաշտպանում է նրա և նմանօրինակ կուսակցութիւնների քաղաքական դեմքը՝ ընդդէմ համարն Ռուսաստանի օտջիալ-դեմոկրատական կազմակերպութիւնների քաղաքական դեմքի:

Բանակուռի դուրս գալ առիթ է տուել պ. Պատակին մեծամասնականների օրգանը՝ «Новая Жизнь», իր մի առաջնորդողով, ուր նա պաշտպանում է քաղաքական կենտրոնացման գաղափարը և իր մինիմալ ծրագրի այն կէտերը, որոնք վերաբերում են մանր ազգութիւնների քաղաքական ճակատագրին՝ ապագայ Ռուսաստանում:

Մենք ներկայ յօդուածում պիտի զբաղուենք գրեթէ բացառապէս պ. Պատակի յօդուածով: Այդ կարգինալ խնդիրները իրանց՝ մասամբ առաձգական և մութ բնաւորութեամբ (յատկապէս Ռուսաստանի համար) մինչև օրս, խոստովանում ենք, փաստալից ուսումնասիրութեամբ չեն լուսաբանուել և ոչ մի կուսակցութեան կողմից, թէև, կրկնում ենք, այժմէութեան նշանակութիւնն ունի մէկը թէ միւսը: Բացի առաջնապէս զործնական խնդիրներ լինելուց, դրանք խնդիրներ են նաև՝ ուսումնասիրական արժէքի տեսակէտից, ակադեմիական բնատրութեամբ:

Այստեղ անկարող ենք մենք շատ նեղու գնալ, երբ մեր քննադատութեան օրինակուր պիտի սահմանափակենք պ. Պատակի յօդուածով, որին կը հետևենք մենք քայլ առ քայլ:

## II

Դրական պոլեմիկան՝ երկու կամ անլի սուբեկտների մէջ կարող է, կարծում ենք, երկու որոշ շրջանակի մէջ տեղի ու-

1) «Մշակ» № 227, 228, 230.

նենալ: Նախ այն դէպքում, երբ երկու բանակոտորները կանգնած են միեւնոյն սկզբունքային հողի վրայ, և միմիանց ջախջախելու համար դէնքեր են վերցնում միեւնոյն՝ դաւանանքի արսենալից: Երկրորդ այն դէպքում—երբ պոլիմիկայի բունուածները դաւանում են տարբեր սկզբունքներ, աշխարհայեացք: Առաջին դէպքում բանակոտորներից մէկը պիտի ցոյց տայ միւսին որ նա սխալ է ըմբռնում երկուսին յայտնի աշխարհայեացքը, որ նա թիւրիմացութեան մէջ է և սխալ է դատում այս կամ այն քաղաքական խնդրի, հասարակական երևոյթի ժասին: Իսկ երկրորդ դէպքում, ոչ միայն մի բանակոտոր պիտի ջրէ միւսի անձնական հայեցակէտն ու դիտողութիւնները, այլ և այն սկզբունքները, մտքերի այն սխտեմը, որի անունից ճանուում, գրում է հերքուողը:

Ինչպէս պ. Սաթակի յօդուածից պարզ երևում է, նա արշաւում է Ռուսաստանի սոցիալ-դէմոկրատիայի դէմ յանուն սոցիալիզմի, վկայ կոչելով վերջնիս առաջնակարգ կորիֆէյներին, անպայման հեղինակութիւններին:

Եթէ մենք աշխատենք հերքել պ. Սաթակի կարծիքները՝ ալֆայից մինչև օմեգա, դարձեալ յանուն սոցիալիստական ունիվերսալ աշխարհայեացքի, նշանակում է՝ գոնէ այդ խնդրում մենք և պ. Սաթակ կանգնած կը լինենք միեւնոյն սկզբունքային հողի վրայ և մեզ վերապահում է—բարեբախտաբար թէ դժբախտաբար—ցոյց տալու, որ պ. Սաթակը շատ սխալ ճանապարհներով է գէնքեր վերցնում սոցիալիստական աշխարհայեացքի արսենալից և անհաշիւ մոլորութիւնների մէջ է ընկել, որ նրա գրեթէ ամբողջ փաստաբանութիւնը թիւրիմածութիւն է—quid pro quo:

Խնդրի իր ծայրիցն է բռնում պ. Սաթակը: Եթէ ճիշտ լինէր յօդուածագրի հէնց առաջին յօդուածում (Մշակո Ձ 227) առաջադրած թեզը՝ որ բիւրոկրատիա և կենտրոնացում, կենտրոնացում և բիւրոկրատիա—դրանց իրարից բաժանել համարեա անկարելի է: Երբ երկրի բէժիմը կը լինի ցնտրալիզմ, երբ գոյութիւն կ'ունենան հրամայող, որոշող մի կենտրոն և երբ այդ որոշումները գործադրութիւն պէտք է գտնեն ոչ թէ մի փոքրիկ վայրում,—մի գաւառում կամ մի նահանգում,—այլ մի ամբողջ կայսրութեան մէջ, այդ դէպքում անպատճառ (sic!) պէտք է գոյութիւն ունենայ մի բիւրոկրատիա: Ինքնակալական է քո երկիրը, թէ հասրապետական—դա այնքան էլ նշանակութիւն չունի բիւրոկրատիայի տեսակէտից: Բիւրոկրատիան իշխում է ինքնակալ Ռուսաստանում, հանրապետական Ֆրանսիայում: Եթէ, ասում ենք, ճիշտ լինէր

այս թեզը, այն ժամանակ վիճել բոլորովին աւելորդ կը լինէր և սոցիալ-դեմոկրատիան Ռուսաստանում կը համարուէր մի քաղաքական յետադէմ կուսակցութիւն, երբ նա իր «ցենտրալիստական» ձգտումներով ուզում է «մի նոր բիւրոկրատիա» (նոտրգրերը յօդուածագրինն է) առաջ բերել: Կարճ և ազդու եթէ ասում ենք քաղաքական կենտրոնացում, ցենտրալիզմ, պիտի դրա Ֆունկցիաները վարող պաշտօնեաները լինեն անպատճառ բիւրոկրատներ. իսկ եթէ ձեր ականջին հնչում է բիւրոկրատիա խօսքը, դուք պարտաւոր էք հասկանալ, որ նա իշխում է քաղաքական կենտրոնացման մէջ՝ այն ևս «մի ամբողջ կայսրութեան մէջ»:

Սա մի վէրին աստիճանի բռնազբօսիկ դատողութիւն է, սա, թող ներուի մեզ ասել՝ մի կատարեալ տերմինոլոգիական ըարքարիզմ է, ուրիշ ոչինչ:

Թող գոնէ պ. Սաժակը նեղութիւն կրէր իմանալու տերմինի թարգմանական նշանակութիւնը, մի կողմ թողած գաղափարի լայն իմաստը և բերած օրինակները, որոնց մէջ նա սխալւում է չարաչար:

Բիւրոկրատիա—դրա տակ օրինակ գերմանացին հասկանում է (նոյն կերպ և միւս ազգերը)—Beamtenzunft Herrschaft Minister—und Beamtenvillkür Herrschaft (պաշտօնեաների կղզիացած միութեան տիրապետութիւն, մինիստրների և պաշտօնեաների կամայականութեան տիրապետութիւն):

Իսկ պաշտօնեաների կամայական տիրապետութիւնը կամ բիւրոկրատիզմը կախուած է ոչ թէ մի որևէ երկրի պետական կազմի կենտրոնացումից—ինչպէս աններելի սխալներով պընդում է պ. Սաժակը—այլ մի որևէ երկրի պետութեան քաղաքական սիստեմից: Ուրեմն բիւրոկրատիզմը, կամայական պաշտօնակատարութիւնը տիրում է այն երկրներում, ուր քաղաքական սիստեմը աքսոլիտիստական (օրինակ Ռուսաստան, Թիւրքիա, Զինաստան) և կէս աքսոլիտիստական-սահմանադրական է (օր. Գերմանիան, Աւստրո-Ունգարիան, Եպպոնիան): Ընդհակառակը, բիւրոկրատիզմից զուրկ են այն երկրները, ուր քաղաքական սիստեմը պարլամենտարիստական է, օրինակ՝ բուրժուական-դեմոկրատական հանրապետութիւն Ֆրանսիան, դեմոկրատական միապետութիւն Անգլիան (բացառիկ քաղաքական սիստեմը երկրագնդի վրայ), դեմոկրատական հասարակապետութիւն՝ Շվեյցարիան, Ամեր. Միացեալ Նահանգները, Աւստրալիան, թէև վերջիններս ոչ կատարեալ ձևերով:

Այստեղ մենք դասաւորեցինք յայտնի, տիպիք օրինակները քաղաքական սիստեմների: Եւ այս դասաւորութիւնից ակ-

ներև է որ մի երկրի կառավարութեան բիւրոկրատիական եւ պարլամետարիստական ծելի միակ կրիտերիումը պետութեան վարչական մեխանիզմի որակն է և ոչ թէ պետութեան կենտրոնացումը կամ ֆեդերացիան: Ըստ այդ կրիտերիումի, ինչպէս պ. յօդուածագիրը կը տեսնէ, բիւրոկրատիական է և՛ կենտրոնացած Ռուսաստանը, և՛ ֆեդերատիւ Գերմանիան: Ըստ այդ կրիտերիումի, ընդհակառակը, անտի-բիւրոկրատիական-պարլամետարիստական է և՛ կենտրոնացած Անգլիան, Ֆրանսիան (որին պ. Նաթակը զարմանալի կերպով բիւրոկրատիական է անուանում), և՛ ֆեդերատիւ Շվեյցարիան, Միացեալ-Նահանգները:

«Երբ մի կենտրոնի որոշումները գործադրութիւն են գրտնում ոչ թէ մի փոքրիկ վայրում,—ասում է պ. Նաթակը,—այլ մի ամբողջ կայսրութեան մէջ (նօտրգրերը մերն են), այդ դէպքում պէտք է անպատճառ գոյութիւն ունենայ մի բիւրոկրատիա»: Որքան միխանիքական է այս դատողութիւնը: Ըստ նրա լոգիկայի քաղաքական միջնավայրի խոշոր ծաւալն է, անոնիտութիւնն է, որ զբոշմում է մի երկրի պաշտօնեաների ճակատին բիւրոկրատ «պատուանունը», և ոչ թէ քաղաքական սիստեմի, օրինակ միապետական, դրութիւնը: Եր ստեղծում է մի բիւրոկրատիական-կաստայական Նիրարխիա և ծայրագոյն բարձրութիւնից լի ու լի ֆունկցիաներ յանձնարարում բոլորին: Վերցնենք գերմանական մանր տէրութիւնները որոնց պ. Նաթակը գեղեցիկ է կգեմպլիար է ծառայեցնում միայն ֆեդերացիայի գաղափարը պաշտպանելու համար, իսկ նրանց կաստայական-իւնկեր-բիւրոկրատիայի մասին խուսափում է որևէ բան ասելու: Պ. Նաթակը պէտք է իմանայ, որ գերմանական 20—30 միապետութիւնները (թագաւորութիւն, իշխանութիւն, մեծ ու փոքր դքսութիւն, ի ըաց առեալ Հանզայի երեք ազատ քաղաքները՝ Համբուրգ, Բրեմեն և Լիւբեկ) իւնկեր-բիւրոկրատական քաղաքական սիստեմներ ունեն: Նա լաւ գիտէ, որ փոքրիկ թագաւորութիւն Վիւրտեմբերգը (իւր 19,504km<sup>2</sup>-ով և 2 միլլիօն ազգաբնակչութեամբ), Մեծ դքսութիւն Մեկլենբուրգ-Շվեբիւնը (իւր 13,304km<sup>2</sup>-ով և 600,000 բնակիչներով) Մեկլենբուրգ-Ցտրիլիցը (իւր 2929km<sup>2</sup>-ով և 100,000 բնակիչներով) և այլ բազմաթիւ մանր իշխանութիւններ ու դքսութիւններ «ամբողջ, կենտրոնացած կայսրութիւններ» չեն, այլ «փոքրիկ վայրեր» մեր կովկասեան նահանգների տարածութեամբ ու բնակիչների քանակով, բայց և այնպէս այդ բոլոր դաշնակից մանր միապետութիւնները «թունդ» բիւրոկրատիական սիստեմներ ունեն:

Սրանով, կարծում ենք, պարզուեց թիւրիմացութիւնը և հիմնովին հերքուեց պ. յօդուածագրի մեխանիքական թեզը, որ իբր իւրաքանչիւր պետական կենդրոնացում առանց այլևայլութեան պայմանաւորում է բիւրօկրատիայի գոյութիւնը և իւրաքանչիւր բիւրօկրատիզմ—նախադրում պետական կենտրոնացման:

III

Պ. Սաժակը շատ է վախենում ցենտրալիզմի գաղափարից, իսկ նրա իրականացման առաջ՝ ուղղակի ստակում: Նա այդ միակողմանիութեամբ այնքան է առաջ գնում և այնչափ չարիքներ վերագրում պետական կենտրոնացման, որ թոյլ է տալիս իրան ինքնակալ ցարի բէակցիային և «ծայրահեղ տիտղոսը կրող մի կուսակցութեան—սոցիալ-դեմոկրատիային»—կշռի միևնոյն նժարի մէջ դասելու: Այդպիսի վերաբերմունքի վերջին հիմքը, ultima ratio-ն, կայանում է այն սիմպլ ու մեխանիքական թեզի մէջ,—իբր ամեն մի կենտրոնացում շաղկապուած է բիւրօկրատիզմի հետ,—որի անհիմն ու բանալ պարունակութիւնը ցոյց տուինք մենք նախընթաց հատուածում:

«Բէակցիան և սոցիալ-դեմոկրատիան կողմնակից են պետական կենտրոնացման» ասում է նա, ergo, ըստ յօդուածագրի լոգիկայի, ինչպէս բէակցիան պաշտպանում է գոյութիւն ունեցող բիւրօկրատական սիստեմը, այնպէս էլ սոցիալ-դեմոկրատիան ձգտում է պետական կենտրոնացումով ստեղծել մի նոր բիւրօկրատիա:

Այս կարգի պնդումները կամ միամտութեան արգիւնք են և կամ mala fide, յետին միտումով արած մի քայլ. երկուսից մէկը:

Եթէ պ. յօդուածագրին քաջ յայտնի է Ռուսաստանի սոց. դեմ. կազմակերպութիւնների մինչև մի քանի ծրագիրը, մերձաւոր նըպատակը՝ իր տնտեսական, սոցիալական եւ քաղաքական խիստ արժատական սահանջներով, ապա ազգային-ցեղական անընաբարելի լայնարձակ իրաւունքներով, մանաւանդ միաձոյլ ազգաբնակչութիւն և առանձնայատուկ պայմաններ ունեցող տերիտորիաների համար, որոնց նկատմամբ կուսակցութիւնը ընդունում է ոչ միայն տեղական լայն ինքնավարութիւն, այլև կարևոր դէպքերում ինքնատրոշման դեմոկրատական սկզբունքը, — եթէ այս բոլորը յայտնի է պ. Սաժակին, ասում ենք, այն ժամանակ նա չպիտի ուրանայ, որ ոչ միայն խօսք չի կարող լինել կարծրացած, միակամ ու ղինաստիա-

կան կենտրոնացման մասին իր բիրտկրատիայով, այլև պաշտակը պէտք է անհրաժեշտորէն ընդունէ, որ սոց.-դեմոկրատիմալ ծրագրի ճշգրիտ դործադրութեամբ կ'իրականանայ մի այնպիսի դեմոկրատական հասարակապետութիւն, որի նմանը դեռ գոյութիւն չունի Եւրոպայում ու Ամերիկայում: Կարծում ենք, որ Ֆեդերալիստ կուսակցութիւնները ևս ձգտում են քաղաքական այս կազմին, այնպէս, որ այդ տեսակէտից պէտք է մենք իրար լաւ հասկանանք:

Սակայն սոց.-դեմ.կազմակերպութիւնների մերձաւոր իդէալ՝ դեմոկրատական հասարակապետութիւնը կը լինի ցենտրալիստական միայն այն չափով, որ նա կը զրկէ ծայրերին օրէնսդրական ըարժը ինստանցիայից—պարլամենտից, այլապէս նա կը շնորհէ բոլոր այլազգի և այլացեղ ծայրերին իրանց բոլոր գործերի մէջ լայն ինքնավարութիւն, աւտոնոմ իրաւունքներ: Դեմոկրատական հասարակապետութիւնը (ցենտրալիստական հիմքերի վրայ) ըստ իր բուն էութեան, մի այնպիսի քաղաքական սխաւեմ է, որ սկզբից և եթ, հիմնադրութեան կանոններով, արմատախիլ է անում ազգային հալածանքի, դինաստիական ճնշումների բոլոր կարելիութիւնները:

Թէ ինչպէս կը դասաւորուեն դեմոկրատական հասարակապետութեան մէջ դասակարգային յարաբերութիւնները և ինչ ծաւալ կը ստանան նացիօնալիստական պայքարները,—մի երևոյթ, որ ամեն դէպքում էլ՝ թէ կենտրոնացման և թէ Ֆեդերացիայի մէջ պիտի տեղի ունենայ, քանի գոյութիւն ունեն բուրժուական հասարակական կարգեր,—դրանց մասին այստեղ երկար ծանրանալ չենք կարող. և իրաւ, ոչ այն պատճառով որ պաշտակը իր յօդուածների մէջ չէ շօշափել խնդրի այդ կողմը, այլ որ տեղի և ժամանակի սղութիւնը հարկադրում է մեզ մի այլ յարմար առիթի վերապահել այդ շահագրգիռ հարցը:

Մենք այստեղ նայում ենք խնդրի վրայ սկզբունքային արժէքի տեսակէտից և մի կողմն ենք թողնում պ. յօդուածագրի՝ «Новая жизнь» օրգանի հասցէին ուղղած անտեղի պարսաւանքները:

Քաղաքական ծրագրի այն միջիմուռը, որի ճշգրիտ իրականացումով պետութեան ըարժը սուվերենիտետը (գերիշխանութիւնը) կը ստանձնէ ինքը՝ հսկայ դեմոսը բովանդակ Ռուսաստանի. ժողովրդի այն ըարժը վերապետութիւնը, որ պիտի սկզբից և եթ ապահովէ բոլոր ազգերի անտեսական և մտաւոր-կուլտուրական ազատ զարգացումը՝ հիմնական գրաւականով, օրինական որոշումներով—այնպիսի պայմաններ են

դրանք, որոնք երբէք չեն անհանգստացնում պրոլետարիատին և նրա դասակարգային կուսակցութեան՝ չարիք ու թերութիւններ որոնելու քաղաքական կենտրոնացման մէջ, այլ ընդհակառակը:

Սեպարատիզմի թէ ֆեդերալիզմի սկզբունքային արժէքը բուրժուական է, լիբերալ ճգտում է—դա անհերքելի փաստ է: Միայն տիրապետող դասակարգն է, որ ձգտում է անկախ ու ազատ լինել իր ազգային շրջանակի մէջ, որպէսզի անկախ ու ազատ շահագործել կարողանայ ազգային-հասարակական բոլոր հանրարժէք ֆակտորները—տնտեսական, սոցիալական թէ քաղաքական սահմաններում: Միայն բուրժուազիան է, որ իր ազգային տերիտորիայում տնտեսական-արդիւնաբերական ճիւղերը և շուկաները կապիտալիստական անարգել ու ինտենզիւ էքսպլուատացիայի ենթարկելու համար՝ կենսական ինտերես ունի, որքան կարելի է արգելել կամ խանգարել հարեւան ազգի բուրժուազիայի աւելի խոշոր, ուժեղ կապիտալի և կատարելագործուած տեխնիկայի մուտքը: Բուրժուազիան չունի դասակարգային սոլիդարիտէտ (համերաշխութիւն) մերձաւոր սահմաններում թէ միջազգային բնաւորութեամբ, դրա փոխարէն նա ունի շուկաների գրամման եւ կապիտալիստական շահագործութեան մի անարխիական մրցութիւն, քաղաքական կոնֆլիկտներին և ազգային պայքարների տոն տուող մի կատաղի արշաւանք, որ թաղուած է կապիտալիզմի էութեան մէջ:

Իսկ պրոլետարիատը չունի որևէ կենսական շահ ֆեդերացիայով թուլացնելու իր խտացած շարքերը: Մի ազգի պրոլետարիատ պէտք է միւսի հետ բաժանէ իր պատմական ճակատագիրը, իր կեանքի դառնութիւնն ու ժպիտը. նա չունի դասակարգային—թշնամական մրցութեան որևէ ինտերես ու առիթ: Այդպէս են թելադրում նրա դասակարգային ոչ միայն բէլա շահերը, այլև բարոյական համերաշխութիւնը—in solidum caviren—բոլորը մէկի համար և մէկը բոլորի համար երաշխաւորելու իդէալական սկզբունքը:

Պ. Խաժախը առաջին յօդուածի մէջ մեխանիքական թեզ է հրապարակ հանում—որի հետ մեր հաշիւը տեսանք,—իսկ երկրորդ յօդուածի մէջ մեխանիքական անալոզներ հանգէս բերում և ենթադրում, որ դրանով հանգոյցը լուծուած է: Նա շարունակ—թէև բոլորովին ի զուր—մատնացոյց է անում Գերմանիայի պետական ֆեդերացիայի վրայ և մխիթարում, որ դրանով ջախջախուած է իր հակառակորդին, որովհետև հէնց ֆեդերատիւ Գերմանիայումն է, որ կազմակերպուած պրոլետարիատը, 1905.

րիատը այնքան սերտ միացած է և հսկայական ոյժ ներկայացնող գերմանական սոցիալ-դեմոկրատիան դժգոհ չէ պետութեան ֆեդերատիւ դրութիւնից:

Այս խնդրում ևս կամ պ. յօդուածագիրը միամիտ է, չգիտէ բանի էութիւնը կամ թէ չէ նա լուում է, դիտմամբ չի շօշափում երևոյթի պատճառը. դուրձեալ արտերանտիւ:

Կարևորը լսօ այն չէ, որ այժմեան ֆեդերատիւ Գերմանիայում բանուորական կուսակցութիւնը հսկայական ոյժ ունի, այլ այն, թէ արդե՞ծք, դեռ սրճան աւելի վիթխարի և ուժեղ կը լինէր նրա քաղաքական հմայքը, եթէ լինէր պետական կենտրոնացում, ըսյց քաղաքական սիստեմի դեմոկրատական սկզբունքներով և ոչ այժմեան ձևով:

Գերմանիայի ներկայ պետական ֆեդերացիան—Bundesstaat—ինչպէս գիտենք, իւնկերական-բուրժուական կաղապարում է, որի ձեռակերտողը եղաւ երկաթէ կանցլեր Բիսմարկը: Ինչ ձևով ու կապերով միանալու մէջ կամք ու ցանկութիւն չունէր ժամանակակից պրոլետարիատի քաղաքական ներկայացուցիչը—սոցիալ-դեմոկրատիան—որովհետև նա իր զարգացման սաղմային վիճակումն էր գտնուում և նոյնիսկ մի կոմպակտ կուսակցական մարմին չէր կազմում, այլ ցիրուցան ֆերայներ (խմբակցութիւններ), առաջացած Լասալի, Բեքելի և Լիբկնիստի ձեռներէցութեամբ: Եթէ Գերմանիան մաշէր Ռուսաստանի ներկայ ըոպէները և դերմ.-սոցիալ-դեմոկրատիան ունենար այն ժամանակ ներկայի ոյժը, կասկած չկայ, որ նրա քաղաքական ծրագրի մինիմումը կը լինէր՝ վերջ տալ բոլոր անդամահատուած միապետութիւնների զոյութեանն եւ վերաստեղծել մի միաժոյլ Գերմանիա դեմոկրատական-հասարակապետական կազմով: Իսկ այժմեան դաշնակցական Գերմանիան՝ Պրուսիայի հեգեմոնիայով, չարիքներից փոքրագոյնն է համեմատած այն Գերմանիայի հետ, որի բոլոր անկիւններում կը տիրէր պրուսական իւնկերական արսուիւտիզմը, եթէ ցենտրալիստական լինէր ամբողջ պետութիւնը: Գոնէ այժմ եթէ Պրուսիայում տուժում է սոցիալ-դեմոկրատիական կուսակցութիւնը քաղաքական իրաւազրկութեան ներքոյ, նա համեմատաբար լաւ վիճակ ունի Բաւարիայում, Վիւրտենբուրգում, Բադենում և այլ տեղերում: Այժմ գերմանական սոցիալ-դեմոկրատիան մաշում է քաղաքական զարգացման վերջին էտապը, և նա կարիք չունի այլևս բուրժուական հասարակական կարգերը ցենտրալիզմի կամ ֆեդերալիզմի հիմքերի վրայ դնելու. կապիտալիստական տնտեսութեան սիստեմը և դրանով պայմանաւորուած ընդհանուր բուրժուական կարգերը հասնելով իրանց զարգաց-

ման դազաթնակէտին՝ նախապայման կը դառնան սոցիալական յեղակոխութեանն. մի կատաստրոֆային ակտ, որ հիմնապէս վերջ կը տայ՝ և՛ միջնադարեան ինկերական-միապետական և՛ մանր բուրժուական-բիւրգերական, և՛ մօդերն բուրժուական-կապիտալիստական կարգերի (իրանց սեպարատիստական թէ ֆեդերալիստական գունաւորումներով) գոյութեան և կը հիմնէ նրա փոխարէն մի էքսպանսիւ կոլեկտիւ մարմին սոցիալիստական հիմքերի վրայ: Իսկ վիթխարի կոլեկտիվիզմը իր կենտրոնական ու ստորադաս ֆունկցիաներով, ոչ թէ հասարակ, այլ մի գերաստիճանի ցինտրալիզմ է, որը, ըստ պ, Սաժակի դատողութեան, պէտք է անպակաս լինի բիւրոկրատիայից, հէնց այն պատճառով, որ նա ցենտրալիստական է: Անտեղի և անհիմն թեզերն ու անալոզները, ինչպէս տեսնուած ենք, մեզ մազաչափ անզամ չեն օգնի՝ խնդիրը գոհացուցիչ կերպով պարզարանելու և լուծելու համար:

IV

Սակայն մեր յօդուածագիրը չի բաւականանում դրանցով, նա ապաւինում է սոցիալիստական հեղինակութիւններին և աշխատում նրանց անունով ապացուցանելու իր ասածը: Եւ իր յօդուածի երրորդ մասում, պ. Սաժակը հանդէս է գալիս, ըստ երևոյթին, որպէս թունդ մարքսիստաբան:

Թէ ինչ քաղաքական նախատեսումներ են ունեցել Մարքսն ու Էնգելսը, որոնք, հակառակ նրանց սպասածի, ժամանակին չեն կատարուել,—դրանց և դրանց պատճառների մասին խօսելը չէ վերաբերում մեզ զբաղեցնող խնդրին. և սխտեմատիկ ու հետևողական լինելու համար չպէտք է պ. Սաժակը մի քանի խօսքով ասէր ու անցնէր դրանց վրայով:

Մենք հետեւնք այն խնդրին, թէ ի՞նչ դիրք են ունեցել մարքսիստական մեծութիւնները ազգային խնդրի և քաղաքական կազմի վերաբերմամբ:

Պ. Սաժակը շատ թոյլ է ըմբռնում դասակարգային տիրապետութեան և կռուի գաղափարը. նա շատ քիչ է ծանօթ—ինչպէս յօդուածից պարզ երևում է—Մարքս-Էնգելսի արածներին՝ անցեալ դարու 40-ական, 50-ական և 60-ական թուականներին: Աններելին ու մեղադրելին խօսյալ չէ, այլ այն, որ նա մի առանձին էրողիցիայով ժխտում է մէկը և հաստատում միւսը հակառակ իրողութեան ու փաստերին:

«Մարքսն ու Էնգելսը—ասում է հեղինակը—չափազանց զբաղուած էին զուտ դասակարգային խնդիրներով—բուրժուա-

զիայի կծու քննադատութիւնով և պրոլետարիատի կեանքի բարելաւման հսկայական հարցով,—նրանք ժամանակ չունէին զբաղուելու նոր հարցերով», այսինքն «ազգային խնդրով»:

Եթէ պ. Սաժակը ըմբռնէր Մարքսիզմը, նա կ'իմանար, որ ոչ Մարքս-էնգելսի և ոչ նրա յաջորդների համար գոյութիւն չունի ընազանցական «ազգային խնդիր»՝ կանգնած դասակարգերից վեր, հեռու նրանց բէալյարաբերութիւնների ու շահերի ընդհարման շրջանակից: Երբ ըստ մարքսիզմի՝ «մարդկային հասարակութեան պատմութիւնը ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ պատմութիւն դասակարգային կռիւների» և երբ այդ դասակարգային կռիւների փաստական ուսումնասիրութիւնն ու տեսական հիմնաւորումը կազմում է Մարքս-էնգելսի գիտնական փայլուն ծառայութիւններից մէկը, նշանակում է «նոր հարց» չէ «ազգային խնդիրը» այլ մի անգամ ընդ միշտ հիմնաւորուած դասակարգային կռուի թէօրիայով բացատրելի հասարակական-քաղաքական երևոյթներ:

«Այն չափով—ասում են Մարքս-էնգելսը—որով կը վերանայ անհատի (ինչպէս և դասակարգի. Բ, Ի.) շահագործութիւնը անհատի միջոցով, նոյն չափով կը վերանայ մի ազգի շահագործութիւնը միւսի միջոցով»<sup>1)</sup>: Իսկ սա, պ. Սաժակ, «երկուսից երեք բառ չէ, նուիրուած ազգային խնդրին», այլ մի մնայուն կլասիք պատուս, որով արտայայտում է այն պատմական ճշմարտութիւնը, թէ որքան կը շարունակուէ կապիտալիստական շահագործութիւնը (պրոլետարի շահագործութիւնը բուրժուայի միջոցով), այնքան էլ գոյութիւն կ'ունենայ ազգային ճնշումն ու նալածանքը—շահագործութիւնը—տիրապետող ղինաստիսայի տիրապետող դասակարգի միջոցով:

Եթէ այդ ուղղութեամբ հետեւելու լինենք Մարքս-էնգելսի (մանաւանդ առաջինի) հրապարակախօսական գործունէութեան 40-ական և 50-ական թուականներին, կը տեսնենք, որ այդ վառվռուն յեղափոխականները ժամանակակից բոլոր ուժեղ շարժումների վերաբերմամբ արտայայտուել են՝ թէ Փրանսիական, գերմանական, սուտրիական յեղափոխութեան, թէ ունգարական ապստամբութեան, թէ իտալական, յետոյ Ֆրանս-պրուսական պատերազմի թէ Ռուսաստանի լեհական նալածանքների ու ճնշումների և թէ պ. Սաժակի սրբախին մօտ խնդրի՝ «Արեւելեան հարցի» մասին:

«Թիւրքիան—զբում էր կարլ Մարքսը թէ 1853 թ. «New-lork Tribune» թերթի մէջ—կազմում է լեզիտիմիստ Եւրոպա-

1) K. Marx und Fr. Engels, «Das Kommunistische Manifest» էր. 22.

յի մի վիրաւոր կէտը: Լեզիտիմիստ և միապետական կառավարութեան սիստեմի անընդունակութիւնը՝ սկսած Ֆրանսիական առաջին յեղափոխութիւնից, արտայայտուել է մի նախադասութեան մէջ՝ ուղիղ և անխախտ պահել status quo-ն»: Այդ ընդհանուր հանաձայնութեան մէջ—այն է թողնել իրերը այնպէս, ինչպէս նրանք որեւէ պատահականութեամբ առաջացել են—կայանում է տիրապետող պետական ոյժերի անզօրութեան և աղքատութեան ապացոյցը, որ նրանք կատարելապէս անընդունակ են զարկ տալու յառաջադիմութեան ու քաղաքակրթութեան»<sup>1)</sup>:

Աւելի ասենք: 60-ական թուականներին, երբ Ռուսաստանը Պրուսիայի օգնութեամբ ճնշում, խեղդում էր յեղափոխական Լեհաստանին, 1863 թ., ապրիլի 28-ին այդ առթիւ կայանում է Լոնդոնում անգլիական և ֆրանսիական բանուորների մի հսկայական միտինգ, որը հէնց պատճառներից մէկն է դառնում Մարքսի յայտնի «Ինտերնացիօնալը» («Internationale Arbeiterassoziation») հիմնադրութեան: Եւ առաջին բարեմաղթութեան հասցէն, որ հիմնադրութիւնից յետոյ «Ինտերնացիօնալը» ուղղում է Ամերիկ, Միաց.-Նահանգների նախագահ Լինկոլնին, կազմում է համախմբուած գիտակից բանուորութեան համակրանքի արտայայտութիւնը ստրուկների ազատութեան վերաբերմամբ: Վերջապէս «Ինտերնացիօնալն» էր այն կազմակերպութիւնը, որ պարսաւում էր անգլիական տիրապետող դասակարգերի դէմ և ջերմ պաշտպանում ընկճուած իրլանդացիների դատը: Իսկ «Ինտերնացիօնալը» ոգին ու ղեկավարը ինքը Մարքսն է եղել: «Ոչ իրլանդական, ոչ լեհական շարժումները և ոչ ստրուկների ազատագրութիւնը չունին ոչինչ անմիջական (նոտրզիրը մերն է) բան վարձու բանուորութեան դասակարգային ինտերեսների հետ»<sup>1)</sup>—ծիշտ նկատում է Կարլ Կառլցկին: Այնուամենայնիւ, կ'աւելացնենք մենք, Մարքսի «Ինտերնացիօնալը» զբաղւում էր այդ կարգի «ազգային խնդիրներով», ընդհարցով: Դուք Մինսկուն, «Новая Жизнь» օրգանին էք անտեղեակութեան և անբարեխղճութեան մէջ մեղադրում: Այժմ դատաւոր եղէք ինքներդ ձեզ վրայ.

1) K. Mark, «Das Nationalitäten in der Türkei beim Beginn des Krimkriegs» («Neue Zeit», XV տարին II հատ. էր. 69):

1) K. Kautsky «Das Erfurter Programm»: էր. 253:

Պարոն յօղուածագիրը անցնում է այնուհետև ներկայ սոցիալիստական հեղինակութիւններին և աշխատում նրանց ասածներով պաշտպանել ֆեդերացիայի գաղափարը: Նա բացառապէս ծանրանում է Կ. Կառլցկու՝ «Էրֆուրտի ծրագրի» հայերէն թարգմանութեան համար գրած յառաջաբանի, ապա «Verus»-ի (աւտորիական սոցիալ-դեմոկրատ) նոյն ուղղութեամբ գրած աշխատութեան վրայ:

Ի դուր նեղութիւն է քաշել պ. Պաժակը:

Դեռ 90-ական թուականներին Կառլցկին ուժեղ պոլեմիկա էր մղում իր «Neue Zeit» օրգանի և «Vorwärts»-ի մէջ՝ Ֆրանց Մերինզի, Բօզա Լուքսեմբուրգի և Պարվուսի (գարձեալ մարքսիստական յայտնի թէօրէտիկներ) դէմ լեհական հարցի առթիւ: Նա պնդում էր ռուսական Լեհաստանի անկախութեան, կատարեալ անջատման անհրաժեշտութիւնը: Դրան հակառակում էին միւս մարքսիստները: Այժմ, սակայն, նոյն Կառլցկին ժխտում է իր այն ժամանակուայ պնդածը մեզ համար գրած յառաջաբանի մէջ և շեշտում, որ Լեհաստանը ևս պիտի մնայ Ռուսաստանի պետական կազմի մէջ. Կառլցկին հետևողական և բէալիստ է իր դիտողութիւնների մէջ: Նա անհրաժեշտ էր համարում Լեհաստանի անջատումը միայն այն ժամանակ (90-ական թուականներին), երբ «հաւանականութիւն չկար, թէ ռուսական արսոյիւտիզմը արմատից կը ջախջախուի, երբ ազատ Ռուսաստանը երազ էր թւում, ուրեմն անհրաժեշտ էր անկախ Լեհաստանը, որպէսզի դրանով սահմանափակուէր Ռուսաստանը, պաշտպանուէր Արևմտեան Եւրոպան նրա նուաճումներից»: Ճիշտ այնպէս, ինչպէս «Կովկասի անջատումը Ռուսաստանից,—աւելացնում է Կառլցկին—և Թիւրքիայի պահպանումը համարում էր արևմ. Եւրոպայի դեմոկրատիայի համար մինչև 19-րդ դարի 70-ական թուականները որպէս մի կարևոր միջոց ցարիզմը թուլացնելու և դրանով ամենուրեք զարկ տալու դեմոկրատիային»: Այդպէս է մտածում Կառլցկին:

Եւ երբ նա այժմ Ռուսաստանի ապագայ քաղաքական կազմի նկատմամբ նպատակայարմար է դատում ֆեդերացիան, այդ ոչ այն պատճառով, որ նա համեմատում է ցենտրալիստական ձևի (այն, որ պաշտպանում է Ռ. Մ.-Դ. Բ. Կ.) հետ և գերադասում առաջինը—այս պէտք էր շեշտէր պ. Պաժակը,—այլ որ նա ֆեդերալիզմը հակադրում է սեպարատիզմին և իրաւամբ ընտրում առաջինը. մի ընտրողութիւն, որ կ'անէր Ռուսաստանի ամեն մի սոցիալ-դեմոկրատ:

Կառլցկին ծանօթ չլինելով Ռուսաստանի բոլոր յայտնի կուսակցութիւնների քաղաքական ծրագրների հետ, դժբախտա-

բար մի քանի չափազանցութիւններ է անոււմ: Օրինակ Կաուց-  
կին կարծում է, որ Ռուսաստանի սահմաններում ապրող զա-  
նազան ազգերի—Ֆինների, լիտուցիների, փորք ռուսների, Կով-  
կասեան զանազան ժողովուրդների մէջ—եռում է մի զօրեղ  
մղում դէպի ինքնուրոյնութիւն. մի մղում, որ արտայայտել է  
ռուսական տէրութեան հետ ունեցած պետական կապերի վե-  
րացման, Ռուսաստանից զօրով անջատուելու և կատարեալ պե-  
տական ինքնուրոյնութիւն ձեռք բերելու ձգտումները:

Այսպիսի արտաոոց երևոյթ, ինչպէս գիտենք, ամենեւին  
գոյութիւն չունի Ռուսաստանում: Բացի լեհական սոցիալիս-  
տական կուսակցութիւնից (P. P. S.), որի դրօշակի վրայ  
գրած «Los von Russland» (հեռանալ, պոկուել Ռուսաստա-  
նից) նշանաբանը նոյն իսկ շատ թոյլ է շեշտոււմ ներկայ յեղա-  
փոխութեան օրով,—չկայ այլևս Ռուսաստանում մի ուրիշ կու-  
սակցութիւն (եթէ մի կողմ թողնենք վրաց-ազնուականութեան  
հին-հին երազները), որ ունենար պետութիւնից իսպառ անջա-  
տուելու յամառ դեմիզը:

Այս բոլորից յետոյ պարզ է, որ Կաուցկին միայն գործ-  
նական արժէքի տեսակէտից է առաջարկոււմ Ֆեդերատիւ ձևը  
իրրև փոքրագոյն չարիք սեպարատիզմի հետ համեմատած: Պ.  
Նաթակը չունի ամենաչնչին փաստն անգամ, ցոյց տալու, որ  
Կաուցկին իր պնդումները հակադրում է մեր երկրի սոցիալ-  
դէմոկրատիայի դեմոկրատական-հասարակապետական ցենտրա-  
լիզմին:

Իսկ ինչ Վերուսի («Verus») գրքին է վերաբերում, ուր նա  
Աւստրիայի Ֆեդերացիան է պաշտպանում, դա ևս չի կարող  
մեզ համար նշանակալից օրինակ լինել: Եթէ իսկապէս քաղա-  
քական Ֆեդերացիան պատճառ կը դառնայ, ինչպէս աւստրիա-  
ցի հեղինակն է ընդունում, վերջ տալու Աւստրիայի խրոնի-  
քական կրիզիսին, ազգերի կատաղի պայքարներին, այն ժա-  
մանակ դա ամենախելօք տակտիկան կը լինի, որին կը դիմէ  
աւստրիական սոցիալ-դեմոկրատիան: Սակայն պ. Նաթակը  
պէտք է լրջմտօրէն վերաբերուէ դէպի մեր երկրի սոց.-դեմ-  
կազմակերպութիւնների քաղաքական իդէալը, որ իր իրակա-  
նացումով երբէք կարելիութիւն չի տայ ազգերի հիմնական ի-  
րաւունքների խախտման, այսինքն առաջ չի բերի կիսաբոս-  
լիտիստ Աւստրիայի ներկայ քաղաքական կրիզիսը:

Սակայն բացի այդ մակերևոյթային դիտողութիւններից,  
պ. յօդուածագիրը պատմում է մեկ չեղած դէպքեր, «հնարում  
է փաստեր» որ իբր «Բունդը» (հրէական սոցիալ-դէմոկրա-  
տական կազմակերպութիւնը), լեհական սոցիալ-դեմոկրա-

տիան, Հ. Յ. Դաշնակցութեան նման պահանջում են Ֆեդերացիա:

Այս կարգի արտուրդ դատողութիւն աւելի քան անսպասելի է: Եթէ կայ բովանդակ Ռուսաստանում մի սոց.-դեմ. կազմակերպութիւն, որ ամենից շատ է խուսափում քաղաքական Ֆեդերացիայից, որովհետև nolens volens չի կարող նա Ֆեդերացիայի խնդիր դնել հրապարակի վրայ—դա հրէական «Բուճղն» է: Ի՞նչպէս կարող է մի կուսակցութիւն Ֆեդերացիայի խնդիր պաշտպանել այնպիսի քաղաքական միջնավայրում, ուր նա մի կտոր չող, տերիտորիա չունի: Պ. Սաժակը շփոթեցնում է երկու բան միմիանց հետ: «Բուճղն» պահանջում է միայն և միմիայն կուսակցական-կազմակերպչական Ֆեդերացիա, ուրիշ ոչինչ, ճիշտ այնպէս, ինչպէս հայերիս մէջ Սոցիալ-դեմոկրատական բանուորական հայ կազմակերպութիւնն է պահանջում: Նոյնը վերաբերում է և՛ լեհական սոցիալ-դեմոկրատիային: Նա ևս հետու է պետական-քաղաքական Ֆեդերացիայի գաղափարից, դա ևս «հնարովի փաստ» է:

Աւելի համոզեցուցիչ չէ՞ր լինի արդեօք և գրողի բարեխղճութիւնը չէ՞ պահանջում, որ պ. Սաժակը կո՛նկրետ փաստերով խօսէր ընթերցողի հետ և տար ճշգրիտ աղբիւրներ իր բոլոր պնդումներին համար:

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ պ. Սաժակը չի կարողացել նոյնիսկ ամենահամեստ չափով ցոյց տալ Ֆեդերալիզմի գերազանցող առաւելութիւնները և ցենտրալիզմի անուղղելի թերութիւնները: Առհասարակ շատ սխալ է ընտրել նա իր քննադատական մեթոդը: Եթէ նա գրում ու դատում է սոցիալիզմի սկզբունքների տեսակէտից, պէտք է վերլուծէր Ռուսաստանի սոց.-դեմ. բանուորական կազմակերպութիւնների մերձաւոր քաղաքական դաւանանքը և ապացուցէր նրա (ցենտրալիզմի) աննպատակայարմարութիւնը թէ պրոլետարիատի դասակարգային շահերի տեսակէտից և թէ ազգերի ընդհանուր կուլտուրական զարգացման տեսակէտից, ապա այդ երկու հայեցակէտերի հիման վրայ պաշտպանէր Ֆեդերալիզմը: Ոչ մէկը և ոչ միւսը չի տուել մեզ պ. Սաժակը. և նրա յիշած փաստական տեղեկութիւնները, ինչպէս տեսանք, մասամբ սխալ հասկացուած և մասամբ հնարովի են:

Բ. Իշխաննան